

րոյ ազագաւ ոչ կարէր ստէպ չըջիլ ի սուրբ Տեղիսն . ուստի խնդրեաց ի Միածնէն իւրմէ բերել նմա յիւրաքանչիւր տեղեաց քար՝ որով ընոյր զփափաք կարօտոյն : Մինն է ի Սինէական լեռնէ , ուր ի վերայ նորա եղև աստուածախօսութիւն . երկրորդն ի Ս . Յորդանանու , յորոյ վերայ մկրտեցաւ Տէրն մեր որ Սուրբն է սրբոց : Երրորդն ի Թափոր լեռնէ , յորոյ վերայ պայծառակերպեցաւ Քրիստոս(*)» . այս մասին տեսնել նաև Հ . Վ . Ե . (էջ 254) : « . . . Յանուանակոչութենէ սրբոյ եկեղեցւոյս ոմանք երկբային ա՛յլ իմն մտածութեամբ . բայց ճշմարիտն լուաք յանկեղծ ծերունեաց թէ , որովհետև ի մէջ սրբոյ քաղաքիս Երուսաղիմայ էջ Միածին Տէրն մեր յաւանդումն ամենամաքուր սուրբ հոգւոյն մօրն . և այժմ տեղին աներեւոյթ է յաչաց ուխտաւորաց , վասն որոյ ի յիշատակ իջման Միածնին՝ տեսանազրեցաւ Էջմիածին անուանադրութեամբ եկեղեցիս այս , զի եկեալ տէրունական ուխտաւորքն՝ վայելեացեն զչնորհս իջման Միածնի Որդւոյն Աստուծոյ յաւուր ննջման մօրն եւ ուխտեալ մխիթարեսցին» (Հան . էջ 92-93 , Բագ . 1867 , էջ 207) :

Արևելեան գրան վրայ , որ մօտ է Սուրբ Մակար

(*) Սուրմալուցի մն . Յովնանէս Տէր Ղազարեան 1840 ի Ակոնի եկեաւորժի մասին իր գրած պատմութեան մէջ Մասիս լեռնէն Երուսաղէմ բերուած սրբազան քարի մը նկատմամբ հետեւեալ աւանդական տեղեկութիւնը ունի իր տարբերակ . « . . Դարձեալ եղբայր , շինի որ միւս անգամ Մասեաց բոյր զիւղ շինէ , չէ՛ վայելէ . ինչ համար այն սարը գեղ է Նոյեայ եւ սրբոց նզնաւորաց եւ քարինս Մասեաց բոյր սուրբ են . եթէ որ սուրբ շինէր , ընդէ՞ր հրեցակը մէկ ոչխարի չափ քար տարէ Երուսաղէմ , որ մայր Աստուծոյ համբուրէ է նորա եւ ուխտ արարեալ է . ես տեսի եմ այժմ այն քարն որ այժմուս կայ» (Մ . Ա . Ե . էջ 364) :